

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կրթության գծով սոցիալական ծախսի փոխհատուցում ստանալու նպատակով եկամուտների հայտարարագիր ներկայացնող անձանց համալսարանի կողմից «Էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթեր» համակարգում պահանջվող **ՀԱՇԻԿ-ՎԱՎԵՐԱԳԻՐ** դուրս գրելու համար ուսանողի կողմից համալսարանի հաշվապահական հաշվառման բաժին անհրաժեշտ է ներկայացնել.

1. Ծառայություն ստացող ուսանողի.

- անձը հաստատող փաստաթղթի լուսապատճենը
- հանրային ծառայության համարանիշի լուսապատճենը
- էլեկտրոնային փոստի հասցե /email/, հեռախոսահամար

2. Ուսման վճարի գծով կրթական ծախս կրող՝ ամուսնու, ծնողի, զավակի, ընտանիքի անդամ հանդիսանալը հիմնավորող փաստաթղթերը.

- ✓ ամուսնու դեպքում՝ ամուսնության վկայականը, անձը հաստատող փաստաթղթի և հանրային ծառայության համարանիշի լուսապատճենները
- ✓ ծնողի դեպքում՝ ծնողի անձը հաստատող փաստաթղթի և հանրային ծառայության համարանիշի լուսապատճենները
- ✓ ծառայություն ստացող ուսանողի ծննդյան վկայականը

3. Բոլոր թվարկված այն դեպքերում, երբ և՛ ծառայություն ստացող ուսանողի, և՛ սոցիալական ծախսը կատարող ընտանիքի անդամի անձը հաստատող փաստաթուղթը նույնականացման քարտն է, որտեղ բացակայում է բնակության փաստացի կամ հաշվառման վայրը, ապա ներկայացնել տեղեկություն այդ մասին:

4. Հայտարարագրման ժամանակաշրջանին վերաբերող կրթության գծով ծախսի (ուսման վարձ) բանկային փոխանցման (վճարման հանձնարարագիր) պատճենը, որում նշված է կրթական ծախսի փոխհատուցման իրավունք ունեցող ընտանիքի անդամի, որպես այդ ծախսը կատարողի՝ տվյալ դեպքում՝ ՎՃԱՐՈՂ լինելու հանգամանքը:

5. Երբ ծառայություն ստացող ուսանողն ինքն է նաև կրթական ծախսի փոխհատուցման իրավունք ունեցող ֆիզիկական անձը, ապա նրա կողմից ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերն են.

- անձը հաստատող փաստաթղթի լուսապատճենը
- հանրային ծառայության համարանիշի լուսապատճենը
- էլեկտրոնային փոստի հասցե /email/, հեռախոսահամար
- կրթության գծով ծախսի (ուսման վարձ) բանկային փոխանցման (վճարման հանձնարարագիր) պատճենը, որում նշված են կրթական ծախս կատարած անձի՝ որպես վճարողի տվյալները: